

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.10.2017թ.

ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Սեմինար և գործնական պարապմունքների արդյունավետության բարձրացման մասին:

(Զեկուցող Ս.Ա.Առաքելյան)

2. ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի հաստատումը:

(Զեկուցող Ս.Ա.Առաքելյան)

3. ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահեկիցների 2017թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ:

(Մ. Ա. Ճաղարյան)

4. Ընթացիկ հարցեր

4.1. ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգի հաստատումը:

4.2. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրության(նոր խմբագրությամբ) հաստատումը:

- 4.3. ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Սմբատի Միմոնյանի և նույն ամբիոնի դասախոս Քնար Օթարյանի «Մակրոսները MSEXCEL-ում» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին:
- 4.4. ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Սմբատի Միմոնյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:
- 4.5. ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:
- 4.6. ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի հաստատումը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «Մեմինար և գործնական պարապմունքների արդյունավետության բարձրացման մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ այս հարցը քննարկվել է նաև ԵՊՀ-ում և գնահատման համակարգում կատարվել է համապատասխան փոփոխություն, մասնավորապես ուսանողի ներկայության

համար տրվող 2 միավորը հանվել է և դրա փոխարեն ուսանողը 2 միավոր կարող է ստանալ իր ակտիվության համար, որը կարող է դրսևորել նաև գործնական և(կամ) սեմինար դասաժամերին, և այս ամենը օբյեկտիվ և տեսանելի դարձնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ուսանողի ակտիվությունը գնահատվի գործնական և սեմինար դասաժամերին և գնահատականը դրվի դասամատյաններում: Նա նշեց, որ այսօր մեր խնդիրը ուսանողին, ոչ թե գիտելիք փոխանցելն է, այլ պետք է ցույց տալ գիտելիք ստանալու ճանապարհը, ընդ որում պետք է բարձրացնել սեմինար և գործնական աշխատանքների արդյունավետությունը: Այդ ժամերին պետք է հնարավորինս աշխատեցնել ուսանողներին, որովհետև ընդունելության քննություններից սկսած ուսանողը բոլոր քննությունները հանձնում է թեստով և չի խոսում:

Պետք է չմոռանալ նաև գործնական, սեմինար, ինչպես նաև պրակտիկայից և կուրսային աշխատանքներից ուսանողների գնահատման օբյեկտիվության մասին, ներկայումս դրվող գնահատականները հիմանականում բարձր են և չեն արտացոլում իրականությունը, մատյաններում չկան անբավարար գնահատականներ: Ուսանողը պետք է ամբիոնի և գրատախտակի մոտ հնարավորինս շատ լինի, և պետք է աշխատել հնարավորինս շատ ուսանողների ներգրավել այդ պրոցեսին: Անհրաժեշտ է բացառել սեմինար և գործնական դասաժամերին դասախոսությունների անցկացումը և հետևողականորեն բարձրացնենք սեմինար և գործնական դասերի անցկացման արդյունավետությունը: Տնօրեն Ս. Առաքելյանը նշեց, որ յուրաքանչյուր քննության կամ ստուգարքի ժամանակ քննող դասախոսի մոտ պետք է լինեն ուսանողների բացակայությունների թիվը և նրաց ստացած գնահատականները տվյալ առարկայի գործնական և(կամ) սեմինար դասերից: Նշվեց նաև, որ շատ կարևոր է ուսանողների բացակայությունների խնդիրը: Ուսանողին թույլատրվում է դասից դուրս գալ եթե նրա ինքնազգացողությունը

վատ է կամ գնում է սանհանգույց, մյուս բոլոր դեպքերում դեկանը պետք է տեղյակ լինի և բացակայությունը դասամատյանում նշվի ըստ կարգի:

Արտահայտվեցին – Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, դոցենտ Ա. Յուզուլյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, դոցենտ Գ. Հովհաննիսյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյար, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, դոցենտ Վ. Բրուտյանը:

Ելույթ ունեցողները կարևորեցին գործնական և սեմինար դասերին ուսանողներին օբյեկտիվ գնահատելու հանգամանքը, դասերից հետո ամբիոններում ուսանողներին տրվող խորհրդատվությունը, ուսանողի ինքնուրույն աշխատելու և լրացուցիչ գրականությունից օգտվելու հանգամանքը, ուսանողի ստացած գնահատականի ճիշտ արտացոլումը վերջնական գնահատականի մեջ: Առաջարկ եղավ առաջավոր մասնագետների կողմից անցկացնել խորհրդատվութուն գործնական և սեմինար դասընթացը վարող մասնագետների համար:

Որոշեցին

Որոշում 27/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ում սեմինար և գործնական դասաժամերն անցկացնել միայն ուսանողների միջոցով:
2. Ուսանողի յուրաքանչյուր պատասխանը սեմինար և գործնական դասաժամերին գնահատվում է դասամատյանում:
3. Ուսանողի սեմինար և գործնական դասաժամերին ստացած գնահատականը արտացոլվում է ուսանողի վերջնարդյունքում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. նոյեմբերի մեկից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի հաստատումը » հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա ներկայացրեց նախագիծը համաձայն հավելված 1-ի: Նա նշեց, որ ԵՊՀ-ում այս կարգը հաստատվել է հոկտեմբերյան գիտխորհրդի նիստում: Տնօրենը կարևորեց այս կարգի ընդունումը, քանի, որ առաջիկայում ԵՊՀ –ում և ԵՊՀ ԻՄ-ում պետական քննություն չի լինելու, լինելու է միայն ավարտական աշխատանքի պաշտպանություն: Տնօրեն Ս. Առաքելյանը նշեց, որ այս կարգը մշակվել է հիմք ընդունելով ԵՊՀ –ի համապատասխան կարգ և առաջարկեց հաստատել:

Որոշեցին

Որոշում 27/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի արտաքին շահեկիցների 2017թ. կարծիքների ուսումնասիրությունը շրջանավարտների վերաբերյալ» հարցի կապակցությամբ լսեցին Մ. Ա. Ճաղարյանի հաղորդումը: Ելույթը կցվում է ամբողջությամբ (տես հավելված 2):

Որոշեցին

Որոշում 27/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

4.1 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգի հաստատումը» հարցի վերաբերյալ:

Որոշեցին

Որոշում 27/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգը համաձայն հավելված 3-ի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4.2 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրության(նոր խմբագրությամբ) հաստատումը» հարցի վերաբերյալ:

Որոշեցին

Որոշում 27/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4.3 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Սմբատի Միմոնյանի և նույն ամբիոնի դասախոս Քնար Օթարյանի «Մակրոսները MSEXCEL-ում» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի 2017թ. սեպտեմբերի 20 –ի նիստում որոշում է կայացվել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների

թեկնածու Աննա Սմբատի Միմոնյանի և նույն ամբիոնի դասախոս Քնար Օթարյանի «Մակրոսները MSEXCEL-ում» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար: Ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է բուհերի տնտեսագիտական և բնագիտական ֆակուլտետի ուսանողների համար, այն կարող է օգտակար լինել նաև MS Excel միջավայրում մակրոսներ օգտագործողներին: «Մակրոսների ծրագրավորումը MS EXCEL-ում» ուսումնամեթոդական ձեռնարկը գրախոսվել է ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Աննա Սեդրակի Հովակիմյանի կողմից:

Որոշեցին

Որոշում 27/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Սմբատի Միմոնյանի և նույն ամբիոնի դասախոս Քնար Օթարյանի «Մակրոսները MSEXCEL-ում» ուսումնամեթոդական ձեռնարկը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4.4 *Լսեցին* – «ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի 2017թ. սեպտեմբերի 3-ի թիվ 1 նիստում քննարկվել է նույն ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանը ԵՊՀ ԻՄ-ում 01.09.2005թ. -ից անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի

մատուցման հատկությամբ, ինչը մեծապես խթանում է ուսանողների իմացական հետաքրքրությանը: Աննա Միմոնյանի վերջին երեք տարիների ուսանողական հարցումների միջին գնահատականը 4.5 է:

Աննա Միմոնյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013թ., որից հետո նա հրատարակել է, 1 ուսումնամեթոդական աշխատանք և 4 գիտական հոդված:

Նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին:

Այնուհետև տնօրեն Ս. Ա. Առաքելյանը քվեարկության դրեց տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ-ի գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշում 27/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Միմոնյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

4.5 *Լսեցին* - «ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին ԵՊՀ-ի գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի 2017թ. սեպտեմբերի 2-ի թիվ 1 նիստում քննարկվել է նույն ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, նրան երաշխավորել է դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ Լիլիթ Հենրիկի Ֆլջյանիը ԵՊՀ ԻՄ-ում 2014թ.-ի սեպտեմբերի 1-ից անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Լիլիթ Հենրիկի Ֆլջյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 27.10.2015թ-ին: Պաշտպանությունից հետո նա հրատարակել է գիտական 4 հոդված և մեթոդական 1 ձեռնարկ, նա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և

դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. Ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող ԲՈՒՀ-ում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ ԲՈՒՀ-ում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն» կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին:

Այնուհետև Ս. Ա. Առաքելյանը գիտխորհրդի քննարկմանը դրեց Լիլիթ Հենրիկի Ֆլջյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար ԵՊՀ-ի գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Արտահայտվեցին – պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, մ.գ.դ., դոցենտ Վ. Բրուտյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան ֆ.մ.գ.թ. Ա. Մարգարյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նա աչքի է ընկնում գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների հարուստ փորձով և արհեստավարժությամբ, նրա դասախոսական աշխատանքը բնութագրվում է բարձր մակարդակով և նյութի մատուցման հմտությամբ: Նրանք առաջարկեցին ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար միջնորդել ԵՊՀ-ի գիտխորհրդին:

ՈՐՈՇԵՑԻՆ

Որոշում 27/8

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին դոցենտի գիտական աստիճան ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի ղեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Հենրիկի Ֆլջյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

4.6 Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի հաստատումը» հարցի վերաբերյալ:

Որոշեցին

Որոշում 27/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 01.02.2010թ.-ին կայացած ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Ս. Ս. ԱԹՈՅԱՆ